Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 1195 - Ա
որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշումով, Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարությամբ և սույն աշխատակարգով:

2. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է: Խորհրդի նախագահը խորհրդի անդամների կազմից կարող է նշանակել խորհրդի նախագահի տեղակալներ, որոնց թիվը չի կարող գերազանցել երկուսը: Խորհրդի քարտուղարը նշանակվում է խորհրդի նախագահի կողմից:

3. Խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 28-ը: Խորհրդի անդամները պետք է լինեն պետական կառավարման համակարգի համապատասխան քաղաքականության և ռազմավարության մշակման համար պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչներ և պետական կառավարման համակարգից դուրս գտնվող՝ գիտության, տեխնոլոգիայի և նորարարության ոլորտների հեղինակություն վայելող ներկայացուցիչներ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից նշանակված:

4. Խորհուրդը քննարկում է ԳՏՃՄ կրթության, կիրառական գիտության և տեխնոլոգիաների զարգացման, նշված ուղղություններով պետական ծրագրերի արդյունավետության բարձրացման և փոխկապակցված զարգացման մեխանիզմների ներդրման, ինչպես նաև նոր պետական ծրագրերի մշակման, գիտատեխնոլոգիական զարգացման ռազմավարության հետ կապված հարցեր և քննարկված

հարցերի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին:

5. Խորհուրդը կարող է ստեղծել ժամանակավոր աշխատանքային խմբեր՝ ներառյալ տեխնիկական խորհրդատվական խմբերը:

6. Խորհրդի անդամների աշխատանքը հասարակական հիմունքներով է՝ առանց որևէ դրամական փոխհատուցման:

7. Խորհրդի աշխատանքների ընթացքում ծրագրերի և նախագծերի քննարկման ժամանակ կարող են ներգրավվել նաև համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ միջազգային փորձագետներ՝ վճարովի հիմունքներով:

8. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նրա հանձնարարությամբ՝ խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների թվի կեսից ավելին:

9. Խորհրդի նիստերի ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

10. Խորհրդի քարտուղարը՝

1) մշակում և Հայաստանի Հանրապետության վարչապետին առաջարկություններ է ներկայացնում խորհրդի նիստերի օրակարգի վերաբերյալ.

2) նիստերի նախապատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի անունից իրավասու է գործադիր իշխանության մարմիններից ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր, ինչպես նաև այլ տեղեկատվություն.

3) համակարգում է խորհրդի ժամանակավոր աշխատանքային խմբերի՝ ներառյալ տեխնիկական խորհրդատվական խմբերի գործունեությունը.

4) ամփոփում և Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում խորհրդի կողմից քննարկված հարցերի շրջանակը, կազմում է խորհրդի նիստի արձանագրությունը:

11. Խորհրդի գործունեության ժամկետը 3 տարի է, եթե Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ այն չերկարացվի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ